ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«30» «հունիսի» 2026 թվական № 219-Ա

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Էկոպարեկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Սահմանել պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգի իրականացման գործընթացներին էկոպարեկային ծառայողի մասնակցության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

6/30/2026

X

ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN ARA 1101780193 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Երևան

Հավելված
Շրջակա միջավայրի նախարարի 2026 թվականի
հունվարի 30-ի N 219-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության մոնիտորինգի (այսուհետ՝ Մոնիտորինգ) իրականացման գործընթացներին էկոպարեկային ծառայողի մասնակցության կարգը:

2. Մոնիտորինգի գործընթացներին մասնակցությունը ներառում է տեղեկատվության հավաքագրումը և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությանը (այսուհետ՝ Լիազոր մարմին) փոխանցումը/տրամադրումը:

3. Էկոպարեկային ծառայողը Մոնիտորինգի իրականացման աշխատանքներին մասնակցում է իր իրավասությունների շրջանակում:

4. Էկոպարեկային ծառայողների կողմից ծառայություն իրականացնելիս իրենց իրավասությունների շրջանակում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների, դրանց որակական և քանակական ցուցանիշների, ապրելավայրերի, անտառների և անտառային հողերի վրա անտառների պահպանության, վերականգնման և անտառօգտագործման բնագավառում մարդածին և բնական տարբեր տեսակի ներգործությունների, դրանց հետևանքների, ապօրինի հատումների, ապօրինի որսի և բացասական այլ գործողությունների վերաբերյալ նախորդող եռամսյակին հավաքագրված տեղեկատվությունը էկոպարեկային ծառայության (այսուհետ՝

Ծառայություն) տարածքային ստորաբաժանումներից էլեկտրոնային եղանակով փոխանցվում է Ծառայության պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների ռիսկերի կառավարման վարչությանը՝ ոչ ուշ քան, հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը:

5. Պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների ռիսկերի կառավարման վարչությունը Ծառայության տարածքային ստորաբաժանումներից հավաքագրված տեղեկատվությունը մշակում, ամփոփում և պետական անտառների, անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացմանն աջակցելու նպատակով ներկայացնում է Լիազոր մարմնին՝ ոչ ուշ քան, հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը՝ համաձայն NN 1-3 ձևերի:

Ձև N 1

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում 20 թ. -------- եռամսյակում արձանագրված հրդեհների վերաբերյալ

Անտառտնտեսության կամ ԲՀՊՏ-ի անվանումը	ամիս, ամսաթիվ	Հրդեհի տեսակը (վերնատարած, գետնատարած, ստորգետնյա)	Հրդեհված անտառի տեսակային կազմը (լայնատերև սաղարթավոր, ասեղնատերև, խառը)	Հրդեհված մակերեսը, հա			Հրդեհի հետևանքով մինչև աճի դադարեցում կենսունակությունը կորցրած ծառեր		Հրդեհի հետևանքով մասնակի վնասված ծառեր		Հրդեհի պատճառը
				Ընդամենը, այդ թվում	անտառածածկ	ոչ անտառածածկ	տեսակ	քանակ, հատ	տեսակ	քանակ, հատ	

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում 20 թ. ------- եռամսյակում արձանագրված իրավախախտումների վերաբերյալ

Անտառտնտեսության կամ ԲՀՊՏ-ի անվանումը	ամիս, ամսաթիվ	Ապօրինի ծառահատում			Ինքնակամ արածեցում	Ապօրինի խոտհունձ	Աղբոտում և աղտոտում	Ծառը, թուփը կամ բուսածածկը մինչև ածի դադարեցման աստիճանի վնասելը կամ ապօրինի ոչնչացնելը				Պտուղների, հատապտուղների, սնկերի, սերմերի, դեղաբույսերի և այլ օգտակար բույսերի ինքնակամ հավաք			Բնության հատուկ պահպանվող տարածքի ռեժիմի խախտում
		ծառատեսակ	ծառերի քանակ, հատ	կոճղի տրամագիծը	անասունների գլխաքանակ, հատ	մակերեսը, հա	մակերեսը, հա	ծառերի/ թփերի տեսակը	ծառերի/ թփերի քանակը, հատ	մակերեսը, հա	մեկնաբանություն	տեսակը	քանակը		նկարագրություն
													հատ	կգ	

Ձև N 3

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում 20 թ. -------- եռամսյակում արձանագրված ապօրինի որսի ու ձկնորսության, ինչպես նաև արդյունագործական նպատակով կատարված ձկնորսության ծավալների վերաբերյալ

Անտառտնտեսության կամ ԲՀՊՏ-ի անվանումը	Արդյունագործական ձկնորսություն		ամիս, ամսաթիվ (վերաբերելի է միայն ապօրինի որսին և ձկնորսությանը)	Ապօրինի ձկնորսություն			Ապօրինի որս	
	տեսակ	քանակ, կգ		տեսակ	հատ	կգ	տեսակ	քանակ, հատ